2888

12/-

616.9
F-12

0 177

1911 № 1790

Հեղինակութիւն բժշկապետ
Ա. Բաբայեանի։

Հրատարակութիւն Կովկասեան Բժշկական Ընկերութեան ցանձնաժողովի խմբագրութեամբ։
(1911 թ.)

Сочиненіе д-ра А. Н. Бабаяна.

Изданіе подъ редакціею комиссіи ИМПЕРАТОРСКАГО Кавказскаго Медицинскаго Общества.
(1911 г.)

616.9
F-12

127

ՀԱՄԱՌՈՏ ԽՐԱՏՆԵՐ

ԹԷ ԻՆՉՊԷՍ ՊԷՏՔ Է ՊԱՇՏՊԱՆՈՒԵԼ ԹՈՔԱԽՏԻՑ

№ I.

Краткое наставленіе какъ уберечься отъ легочной чахотки.

ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

2002

ВСЕСОЮЗНАЯ ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

ՀԱՄԱՌՈՏ ԽՐԱՏՆԵՐ

ԹԷ ԻՆՉՊԷՍ ՊԷՏՔ Է ՊԱՇՏՊԱՆՈՒԵԼ ԹՈՔԱԽՏԻՑ

Թոքախտը (բարակացաւը) մարդկային ցեղի ամենաաւերիչ հիւանդութիւնն է. նա աւելի ժողովուրդ է կոտորում, քան ժանտախտը, խօլերան և այլն. միայն թէ նա կամաց-կամաց է հնձում մարդկանց կեանքը, այնպէս որ շատ աչքի չէ ընկնում։

Թոքախտից մեռնում է ամեն տարի մէկ միլիոն ժողովուրդ Եւրոպայում, իսկ միայն Ռուսաստանում՝ հինգ հարիւր հազարից աւելի։ Ամեն տեղ բարակացաւը հասարակ ժողովրդի ցաւ է համարւում. որովհետև նա տարածուած է մեծ մասով այն մարդկանց մէջ, որոնք մաքուր օդից և արեգակից զուրկ են, ապրում են շատ-տրով, նեղուած, մութ և խոնաւ բնակարաններում, սննդարար կերակուր չունեն։ Նրա զոհն են դառնում արհեստաւորներ և գործարանների բանւորներ, որ աշխատում են ապականած օդում. աշակերտներ և ուսուցիչներ, որ չեն բաց անել տալիս ուսումնարանի պատուհանները. փոչոտ զօրանոցների զինւորներ, բանտերի խեղդիչ

օդի մէջ տառապող կալանաւորներ, երեխաներ, որ շարունակում են հաղալ կապտացաւից և կարմրուկից յետոյ։ Բայց ամենից աւելի նոյն պայմաններում հիւանդանում է բարակացաւոտ գերդաստանների սերունդը։

Այս հիման վրայ նախկին ժամանակ թոքախտը համարւում էր ժառանգական հիւանդութիւն, ազգատ՝ հրաւոր դասերին աւելի վիճակուած։ Այդ պատճառով ոչ ոք չէր էլ համարձակւում մտածել թէ կարելի է դիմադրել թոքախտի տարածմանը ժողովրդի մէջ։ Մինթէ դիւրին է վերցնել աշխարհիս երեսից ազգատութիւնը, ով կարող է փոխել ժառանգականութեան օրէնքները. ուստի մնում էր մի բան, որ դեղորայը գտնեն գոնեա թոքախտոտ հիւանդներին առողջացնելու։ Հին ժամանակից դեղորայը փորձուած են, բայց մինչ օրս էլ հաստատ բուժող ճար դեռ չէ գտնուած։ Այսպէս բարակացաւը անխափան տարածւում էր դարերի ընթացքում...

Սակայն վերջին քսան երեսուն տարուայ մէջ գիտնականները պարզեցին, որ բանը ժառանգականութեան և միայն ազգատութեան մէջ չէ. նորա գտան, որ թոքախտի տարածուելու գլխաւոր պատճառը նորա ՎԱՐԱԿԻՉ (տարափոխիկ) յինելն է։ Միւնոյն գիտնականները ճանաչեցին թոքախտոտ հիւանդի ցաւագար անդամների և խուխի (բալղամի) մէջ ցաւի սկզբնապատճառը *վարակիչ սաղմը*, որ հասարակ աչքին անտեսանելի է, բայց խոշորացոյցի միջոցով շատ լաւ կարող է տեսնուել։ Այդպիսի սաղմը, երբոր ընկնում է մեծ քանակութեամբ տկար վատառողջ մարդու, ասենք, կաշու վրայ, շատ շուտով աճեցնում է և զարգացնում է գրն-

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм. ССР
Ա. ԱՄ. Ա. Մ. Ասատրյան
50165-ա
36454-66

դիկներ (տուբերկուլներ) որոնք յետոյ, յառաջ են բերում, օրինակ երեսի վրայ՝ սարսափելի խոցեր։ Այս է ահա այն ցաւը, որ գիտութեան մէջ կոչւում է կաշու տուբերկուլոզ (լուպուս), հայերէն դայլերախք (դայլերախ)։

Միևնոյն վարակիչ սաղմերը, երբ թափւում են բնականից թուլակազմ և վատոյժ մարդու թոքերի մէջ, այնտեղ էլ յառաջ են բերում բազմաթիւ գնդիկներ (տուբերկուլներ) և սկզբում պատճառ են լինում չոր հազին։ Այդ գնդիկները թոքերի մէջ հետզհետէ կակղելով կազմում են փոքր ու մեծ խոցեր, որոնցից և առաջ է գալիս ամենքին յայտնի՝ ԱՐԵՆԱԹՔՈՒԹԻՒՆ և թարախանման խորխը։ Այս է *թոքերի գնդախտ* (տուբերկուլեօզ), որ կոչւում է հասարակօրէն ԹՈՔԱԽՏ կամ ԲԱՐԱԿԱՑԱՒ։

Այսպէս աւելի և աւելի ծանօթանալով թոքախտի վարակիչ սաղմի—յատկութիւններին, գիտունները վերջապէս մի շատ մխիթարական եզրակացութեան եկան, այն է որ կարելի է մաքառել թոքախտի վարակման դէմ, ինչպէս որ մարդիկ մաքառում են միւս վարակիչ (տարափոխիկ) ցաւերի դէմ։

Երկու եղանակ կայ դիմադրելու բոլոր վարակիչ ցաւերին, ինչպէս և թոքախտին։ *Առաջին եղանակն այն է՝* որ ընդհանուրի կամ հասարակաց առողջութիւնը պահելու համար միջոցներ գործ դրուեն։ Այս նշանակում է, որ պէտք է *դաստիարակել ամուր կազմուածք ունեցող* առողջ զաւակներ։ Ամուր կազմուածք ունեցող առողջ մարդկանց արիւնը հեշտ է յաղթում և ոչնչաց-

նում մարմնի բոլոր մասերի մէջ իւր վրայ յարձակուող թշնամիներին, այսինքը թոքախտի սաղմերին։ Թուլակազմ մարդկանց արիւնն այդպիսի յաղթող զօրութիւն չունի։

Պէտք է ժողովրդի կազմուածքը թուլացնող *արքեցութեան դէմ* ընկերութիւններ կազմել, թէյատներ հաստատել օգտակար զուարճութիւններով. պէտք է աղքատ դասի համար հիմնել աժանագին ճաշարաններ, ժողովրդական հացատներ (փռներ), աժանագին և առողջ բնակարաններ. պէտք է տալ ժողովրդին *առողջարար ջուր*։ Այս ամենը տէրութեան, քաղաքների և համայնքների գործն է, թող ուրեմն նորա հոգան։

Երկրորդ եղանակն այն է, որ ամէն մէկը գիտենայ թէ մարմնից դուրս ո՞րտեղ է վարակի բունը կամ ցաւի պատճառները և պէտք է աշխատի ոչնչացնել այդ վարակաբները կամ հեռու մնալ նոցանից։ Ահա այդ մասին և պէտք է խօսենք մենք ներքևը։

Ամէնից առաջ հարկաւոր է իմանալ թէ թոքախտը այն տեսակ վարակիչ ցաւերից է, որոնք կամաց կամաց են ներգործում, ինչպէս սիֆիլիսը (վատ ցաւ), բորոտութիւնը և այլն։ Միայն թէ այդ ցաւը ժառանգաբար շատ սակաւ է անցնում մարդուս. երեխաները վարակուել կարող են միայն աշխարհ գալուց յետոյ։

Բացի այս՝ լաւ գիտնալու է, որ թոքախտը ՌՈՒԹԵԼԻ հիւանդութիւն է. նորանից կարելի է ազատուել մինչև անգամ առանց դեղեր գործ դնելու. միայն թէ դորա համար պէտք է որ հիւանդութիւնը չհնանայ։ Հնացած թոքախտն արդարև դժուար է բժշկել։ Առաջին

անգամից հէնց որ թոքախտի համար կասկածն յայտնի է լինում, հարկաւոր է հիւանդին հեռացնել այն շրջանից, որի մէջ վարակուել է և տանել մի առողջ տեղ ու տեղաւորել նրան այնպէս, որ օրուայ և գիշերուայ մեծ մասը նա կարողանայ շնչել մաքուր օդ, աւելի շատ սնունդ ստանալ և բժշկի հսկողութեան տակ գործ դնել նաև մի քանի նախազգուշութիւններ։ Այդ նպատակի համար և ամէն տեղ հաստատուած են այժմ թոքախտով հիւանդների համար *յատուկ առողջարաններ* (սանատորիա)։

Հարկաւոր է նոյնպէս գիտենալ, որ թոքախտով հիւանդն ինքն ըստ ինքեան վտանգաւոր չէ շրջապատողների համար թէ տանն և թէ հասարակութեան մէջ։ Չէ՞ որ բարեկարգ հիւանդանոցներում և բուժարաններում հարիւրաւոր թոքախտոտ հիւանդներ չեն վարակում իրանց բժիշկներին և հիւանդապահ սպասաւորներին։ Վարակուելու վտանգը *գլխաւորապէս այն խուխիցն է*, որ հիւանդի արդէն ապականուած թոքերից դուրս է գալիս։ Այդպիսի խուխի կամ թուքի ամէն մի կաթիլն ունի իւր մէջ հազարաւոր սաղմեր։ Նշանաւոր է այն, որ այդ սաղմերի վարակիչ զօրութիւնը չի կորչում մի քանի ամիսների ընթացքում, մինչև անգամ եթէ խուխը ՉՈՐԱՆԱՑ ԵԻ։

Հէնց որ խորխը սկսում է ցամաքել, նա դառնում է փոշի. երբ աւելում են յատակը կամ գորգերը (խալի, կարպետ) թափ են տալիս, այդ փոշին բարձրանում է օդի մէջ, ընկնում է մարդուս թոքերը և վարակում է նոցա թոքախտով։ Այստեղից ահա պարզ է, որ հա-

ըիւրաւոր մինչև անգամ հազարաւոր մաքրասէր թոքախտոտ հիւանդներ միասին ամենեին այնպէս վտանգաւոր չեն շրջապատողների համար, ինչպէս մէկ անզգոյշ հիւանդը, որ ամէն մի հազալու ժամանակ իւր խուխը թափում է գետնին, յատակին, գորգերի վրայ, թաշկինակի մէջ. այդպիսի հիւանդը ոչ միայն վարակում է շրջապատողներին, այլ վատացնում է իւր դրուութիւնը, որովհետև նորա չորացած խուխի մանր փոշին յետոյ ընկնում է նաև նորա թոքի առողջ մասերի մէջ և այնտեղ ցաւի նոր նոր բուն շինում։

Բոլոր այս ասածից դուրս են գալիս հետևեալ

ամենակարևոր կանոններ թոքախտից պաշտպանուելու համար։

1. Ամէն մէկ հիւանդ, որ երկար հազում է, պէտք է իրեն համար սովորութիւն անէ ոչ մի ժամանակ չթքել գետնին, յատակին, գորգերի վրայ, թաշկինակների մէջ, այլ՝ թքել միմիայն այդ նպատակի համար նշանակուած ամանների մէջ (թքաման), որոնք պէտք է լցուած լինին ջրով, բայց ոչ երբէք աւազով կամ չոր թեփով, ինչպէս այդ սովոր են անել շատ տներում։

2. Տան մէջ իբրև թքաման կարող է լինել որ և է ամենահասարակ աման, թէկուզ կաւից չինած. կարելի է ընտրել դորա համար մի թաս կամ բաժակ կամ ուրիշ այդպիսի աման, որի մէջ անպատճառ պէտք է ըրա-

նուի փոքր ինչ ջուր մի գդալ ածանագին սկիպիդարի կամ բորայի թթուի հետ խառնած։ Ամառը թքամանները պէտք է ունենան խուփ ճանճերին արգելելու համար, որովհետև ճանճերը խուխի վրայ նստելով ապա տանում տարածում են վարակիչ սաղմն ուրիշ տեղեր։

3. Երկար հազացող հիւանդը պէտք է, որ տանից դուրս էլ իրեն հետը ունենայ գրպանի թքամաններ, ինչպէս են. տափակ գաւաթներ, լայն բերան ունեցող ապակէ անօթ խցանով. հակառակ դէպքում ներելի է թքել թաշկինակի մէջ, բայց տուն վերադառնալուն պէս այդպիսի թաշկինակը պէտք է նետել եռ ջրի մէջ և ապա լուանալ։

4. Թքամանների մէջ հաւաքուածը պէտք է թափել աղբահան խողովակների կամ արտաքնոցների մէջ, որտեղ թոքախտի սաղմերն անշուշտ կոչնչանան. ամէն անգամ գործ դնելուց առաջ թքամանները պէտք է դնել եփջրի մէջ և մաքուր ջրով լցնելուց յետոյ դնել զանազան տեղերում։

5. Որովհետև հիւանդութիւնը կարող է տարածուել թոքախտաւորների թուքի և թարմ խուխի ցայտերով (կաթիլներով), ուստի ամէն մէկ երկար հազացող հիւանդ պէտք է գործ դնէ յայտնի նախազգուշութիւններ, իբրև քաղաքավարութեան կանոն, ուրիշի հետ խօսելիս նորա երեսին թուք չարձակելու (հազալիս երեսը շուռ տալ մի կողմ, բերանին թաշկինակ դնել և այլն)։

6. Այն սենեակներում, որոնց մէջ բնակում է թոքախտաւորը, չպէտք է լինի ոչ վարագոյր, ոչ գորգ։ Թող ազատ ներս մտնի արևը ու լոյսը, որ ոչնչացնում

են հիւանդաբեր սաղմերին։ Հիւանդի բնակարանի յատակները պէտք է լուանալ, այլ ոչ թէ աւելել։ Առհասարակ այդպիսի բնակարանների աղբը (գիպիլը) երբէք պէտք չէ փողոցը կամ դարբասը թափել, այլ ամենից լաւն է այրել։

7. Հիւանդները պէտք է իւրեանց սենեակում մենակ քնեն. հարկաւոր ժամանակ, երբ հիւանդը կարօտ է մշտական խնամքի, կարելի է թողնել նորա մօտ և մէկին։ Թոքախտաւորները պէտք է ցերեկը, որքան կարելի է երկար ժամանակ, մնան դուրսը բաց օդի մէջ, պարկած կամ ման գալով, ինչպէս որ նոցա կարողութեանն յարմար է։ Նորա ննջարանի լուսամուտները պէտք է գոր—գիշեր բաց լինեն, գործ դնելով ի հարկէ վատ եղանակներին կամ սաստիկ քամու ժամանակ յայտնի նախազգուշութիւններ։

8. Թոքախտաւորի հագուստը, սպիտակեղէնը և միւս իրեղէնները հիւանդի մահից յետոյ ծառաներին կամ աղքատներին *բաշխելը մեղք է*, որովհետև պատահել է, որ դորանից թոքախտով վարակուել են աղքատ, բայց առողջ մարդիկ։ Եթէ չքաւոր մարդու ափսոսը գայ թոքախտաւորի հագուստն ու սպիտակեղէնը այրել՝ այն ժամանակ պէտք է գործ դնելուց առաջ գոնէ երկու ժամ եռցնել ջրի մէջ։

9. Այն սենեակը, որտեղ ապրում էր և մեռել է թոքախտաւորը, պէտք է 2—3 շաբաթ շարունակ քամուն տալ և գոր—գիշեր բաց թողնել նորա դռներն ու պատուհանները։ Պատերն, առաստաղը և յատակը լուանալ կարբոլի ջրով (5%), ապա նորից սպիտակացնել,

և սորանից յետոյ միայն բնակել այդպիսի սենեակի մէջ։

10. Խուխից զատ թոքախտի տարածուելու *նրկրորդ* վարակատեղին և պատճառը այն կենդանիներն են, որոնք թոքախտով հիւանդ են, յատկապէս կովերն և խոզերն։ Այն դէպքում, երբ դուք համոզուած չէք, որ կաթ տուող կովն առողջ չէ, կաթը գործածեցէք միայն լաւ եփ տալուց յետոյ։

11. Միենոյնը կարելի է ասել ընտանի կենդանիների մսի համար. *Թերի տապակած մսի*, կամ հում մնացած խորոված գործածութիւնը *խորհուրդ տալու չէ*։ Վերջին ժամանակներս թոքախտաւորներին առաջարկում են ուտել և խմել հում միս կամ մսի հիւթ։ Աւելի լաւ և աւելի անվտանգ է այսպիսի դէպքերում բացի լաւ խորոված մսից *մսի փոշին*, որի պարաստելը կարող է սովորեցնել հիւանդին ամէն մի բժիշկ։

Այն երկիրներում, որտեղ լուրջ կերպով մաքառում են թոքախտի դէմ և այդ ճանապարհով կարողացել են 20—30 տարուայ մէջ կիսով չափ պակասեցնել թոքախտից մահացողների թիւը, բոլոր վերոյիշեալ կանոնները տալիս են առանձին թերթերի վերայ և կախում են աչքի ընկնող տեղերում, որպէս զի ժողովուրդը միշտ կարդայ և հետևի այդ կանոններին։

Մեզանում փոքր քաղաքների և գիւղերի մէջ թերթիկներ և գրքոյկներ շատ քիչ են կարդում, այդ պատճառով անհրաժեշտ է, որ քաղաքներում ամէն մի կարդացող մարդ, իսկ գիւղերում քահանաները, մոլլաները,

21121 Օ

ուսուցիչները, գրագէտները, կպցնելով մեր այս թերթերը եկեղեցիների գաւիթներում, հրապարակների պատերին, որտեղ անգրագէտ ժողովուրդը հաւաքւում է՝ կարդան այս խրատները և բացատրեն ժողովրդին նոցա օգուտը։ Այստեղ հարկաւոր է աջակցութիւն և ժողովրր-դական դպրոցի կողմից, որը կարող է սերունդից սերունդ մոռացնել տալ երեխաներին վատ սովորութիւնն, այն է ամէն մի հազալիս թքել զանազան կողմ։ Մէկ խօսքով պէտք է ամենքն էլ հաստատապէս աշխատեն, որ հազացողն ամաչէ եւ քաշուի իւր խուխը թափելու ուր որ պատահի այնպէս, ինչպէս այժմ քաղաքներում և շատ գիւղերում ամէն մարդ ամաչում է քիթը ձեռով խնչել և չունենալ դորա համար թաշկինակ։ Նշանակում է, որ այս բանը դառնայ ժողովրդին սովորութիւն։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZUUՌ-Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Библиотека Института Востоковедения Академии Наук СССР

2013

ՀՀ Ազգային գրադարան
NL0074260

2888

Типографія Т. М. Ротиніанца, Голов. просп., № 39.
ТИФЛИСЪ. 1911.